

ԱՐԾԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ՁԿ Տեբեթ 2019թ.

N 35 Ա

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 15-ի N 164-Ա որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արցախի Հանրապետության փոքր հիդրոէլեկտրակայանների ջրաչափական մշտադիտարկման կենտրոնացված համակարգի ներդրման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- 1) Աշոտ Հարությունյան Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ՝ խմբի ղեկավար
- 2) Ռաֆիկ Մաթևոսյան նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կենսաբազմազանության և ջրերի ու մթնոլորտի վերահսկողության բաժնի պետ
- 3) Էլլադա Արամյան նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման և բնապահպանության քաղաքականության բաժնի պետ
- 4) Ինգա Գասպարյան նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման և բնապահպանության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ
- 5) Սերգեյ Քարամյան նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար

6) Մարիամ Գաբրիելյան նախարարության աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ աշխատանքներն իրականացնել սույն թվականի մարտի 27-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակաշրջանում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին՝ ծրագրի արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացնել նախարարին մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

4. «Արցախի Հանրապետության փոքր հիդրոէլեկտրակայանների ջրաչափական մշտադիտարկման կենտրոնացված համակարգի ներդրման միջոցառումների 2019 թվականի ծրագիր»-ի անմիջական վերահսկողությունը վերապահել նախարարի տեղակալ՝ Ալեքսանդր Գասպարյանին:

5. Նախարարության աշխատակազմի քարտուղարության պետին՝ հրամանը հասցնել նախարարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարին, բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետին, բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին, աշխատանքային խմբի անդամներին՝ իրենց վերաբերող մասով:



Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ